ՀՖՖ Նախագահի ծրագրային հայտարարությունը 2011/2012թթ-երի ակումբների արտոնագրման մրցաշրջանի համար

Հարգելի տիկնայք եւ պարոնայք

Սույն հայտարարությամբ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան պաշտոնապես սկսում է իր ակումբների արտոնագրման համակարգի 8-րդ մրցաշրջանը, որին կմասնակցեն ՀՀ Բարձրագույն խմբի 2011թ. առաջնությանը մասնակից թիմերի մայր ակումբներն և ՈՒԵՖԱ-ի 2011/2012թթ. մրցաշրջանի պաշտոնական ակումբային մրցաշարերին հանդես գալու իրավունք ստացած ակումբները:

Նորընծա մրցաշրջանը տարբերվում է նախորդներից նրանով, որ ՀՀ Բարձրագույն խմբի առաջնությունը հոբելյանական 20-րդն է եւ այն սկիզբ է առնելու համեմատաբար ավելի վաղ, ինչի պատճառով արտոնագրային գործընթացը սովորականից ավելի կարճ է տեւելու:

Ինչեւիցէ, իմ կողմից տրվել են համապատասխան հանձնարարականներ ՀՖՖ Արտոնագրման բաժնի աշխատակազմին եւ կասկածից վեր է, որ մեր արտոնագրողներն, ինչպես միշտ, բազմակողմանի օժանդակություն կտրամադրեն արտոնագրման թեկնածու ակումբներին համակարգի պահանջներին նրանց համապատասխանելիությունն ապահովելու համար: Ասեմ ավելին՝ այդ աշխատանքներն արդեն իսկ սկսվել են եւ 2010թ-ի հոկտեմբերից մինչ օրս Բարձրագույն խմբի աշխատակիցների համար անցկացվել է 4 սեմինար-հանդիպում, որոնցից մեկը՝ ՈՒԵՖԱ-ի Արտոնագրման բաժնի մասնագետի մասնակցությամբ:

Միաժամանակ ես ակնկալում եմ, որ բոլոր ակումբներն անխտիր նույնպես պատասխանատվություն կդրսեւորեն այս աշխատանքների նկատմամբ, ինչը թույլ կտա այս գործընթացն ավարտել հաջողությամբ:

Ընթացիկ մրցաշրջանը յուրահատուկ է նաեւ այն իմաստով, որ դրանում 1-ին անգամ կկիրառվի 2010թ. հոկտեմբերի 15-ին ՀՖՖ Գործադիր կոմիտեի կողմից հաստատված ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգի կանոնակարգը, որը հիմնված է ՈՒԵՖԱ-ի ակումբների արտոնագրման եւ ֆինանսական արդար խաղի կանոնակարգի վրա: Այս փաստաթուղթը ներկայացնում է նոր պահանջներ, որոնք համեմատաբար ավելի բարդ են եւ պահանջում են զգալի աշխատանք:

Շարունակելով ձեւավորված ավանդույթը եւ հիմնվելով նախորդ մրցաշրջանների արդյունքների վրա՝ ստորեւ ձեր ուշադրությանն են ներկայացվում ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգի հիմքերը.

<u>ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ</u>

- ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգի նկատմամբ ակումբների կարիքների եւ ակնկալիքների բավարարում, օժանդակում ակումբների գործունեության բարելավման հարցերում եւ նրանց իրավունքների պաշտպանություն;

- ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգի արդյունավետության մշտական բարելավում եւ մասսայականացում;

- ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգի աշխատակցի Վարքագծի Կանոնագրքի դրույթների անշեղորեն պահպանում;

- ՀՀ օրենսդրության, ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՀՖՖ-ի կանոնների անշեղորեն պահպանում;

- Ակումբների արտոնագրման շրջանակներում եվրոպական առաջավոր փորձի ուսումնասիրում, կիրառում եւ միջազգային կապերի զարգացում;

- Ակումբների եւ ՀՖՖ-ի ենթակառուցվածքների զարգացում ըստ ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի եւ ՀՖՖ-ի պահանջների;

- ՀՀ տարածքում մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման պայմանների բարելավում;

- Բազմակողմանի աջակցություն ակումբներին՝ մարզչական կադրերի պատրաստման եւ վերապատրաստման հարցերում;

- Բազմակողմանի աջակցություն ակումբներին՝ ՈՒԵՖԱ-ի Ֆինանսական Արդար Խաղի դրույթների կիրառման հարցում:

<u>ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ</u>

- Արտոնագրերի շնորհում ՀՀ Բարձրագույն խմբի առաջնության եւ ՈՒԵՖԱ-ի պաշտոնական ակումբային մրցաշարերի մասնակից ակումբներին;

- ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգի զարգացման ուղիների մշակում;

- ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգի կառավարում, գործունեության կոորդինացում, զարգացման ծրագրերի հստակեցում եւ դրանց իրագործման վերահսկում;

- Աջակցություն ՀՖՖ ակումբներին՝ նրանց մասնագետների (մարզիչներ, բժիշկներ, մամուլի քարտուղարներ եւ այլն) պատրաստման եւ վերապատրաստման հարցերում;

- Արտոնագրերի շնորհում ակումբների մարզիչներին եւ այն մասնագետներին, որոնց գործունեությունը պահանջում է համապատասխան թույլտվություն համաձայն ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի եւ ՀՖՖ-ի կանոնների;

- Բազմակողմանի աջակցություն միջազգային մրցաշարերում հանդես եկող ՀՖՖ ակումբներին;

- Շփումների կազմակերպում, պահպանում եւ համագործակցություն այլ ասոցիացիաների, ՈՒԵՖԱ-ի եւ ՖԻՖԱ-ի հետ՝ ակումբների արտոնագրման համակարգի ներդրման հարցերում;

- Մասնակցություն ՀՖՖ-ի զարգացման ռազմավարական ծրագրի մշակման եւ գործնական կիրառման հարցերում

- ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգի Կանոնակարգի, ՀՖՖ հրամանների եւ այլ արձանագրությունների, ինչպես նաեւ ՖԻՖԱ-ի եւ ՈՒԵՖԱ-ի նմանատիպ փաստաթղթերի պահանջների կատարման վերահսկում;

- ՀՖՖ ակումբների փաստաթղթերի եւ արխիվային նյութերի հաշվառման եւ վիճակագրության վարում, ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգի գործունեության տարեկան հաշվետվությունների թողարկում;

- Մշտական կապի պահպանում ՀՀ ԶԼՄ-ների եւ միջազգային սոցիալական ցանցերի հետ՝ ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգի մասսայականացման ապահովման համար;

- Առաջարկների ներկայացում մարզական օբյեկտների կառուցման եւ վերակառուցման, նյութատեխնիկական բազայի բարելավման վերաբերյալ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ մասնակցություն այդ նախագծերին՝ ինքնուրույն, ինչպես նաեւ պետական եւ տեղական մարմինների եւ մասնավոր ընկերությունների հետ համատեղ;

- Տեղեկատվական, մեթոդաբանական եւ խորհրդատվական աջակցության տրամադրում ակումբներին՝ ֆինանսական, իրավական, կադրային, մարզական եւ այլ հարցերի վերաբերյալ:

Ահա այսպիսին կլինեն ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգի խնդիրները գալիք 3 մրցաշրջանների համար:
Կասկածից վեր է, որ ըստ նշված քաղաքական կետերի եւ նպատակային խնդիրների՝ տարվող աշխատանքները կնպաստեն ոչ միայն ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգի զարգացմանը, այլ նաեւ ակումբների ֆինանսական, կադրային, ենթակառուցվածքային, իրավական եւ մարզական բնագավառներում տարվող աշխատանքների բարելավմանն ու եվրոպական նվազագույն պահանջներին համապատասխանելիությանը:

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան համոզված է իր ծրագրերի եւ ընտրած ուղու ճշմարտության մեջ եւ շարունակելու է լինել հետեւողական ու խստապահանջ իր սկզբունքների իրականացման հարցում եւ ակումբների արտոնագրումը հանդիսանում է այդ ծրագրերի բաղկացուցիչ մաս:

ՀՖՖ Նախագահ Ռ. Հայրապետյան **Երևան 10 հունվարի 2011թ.**